ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հունվարի 7-ին, կիրակի.—Է օր Ծնընդեան.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Արսեն ծ. վրդ. Բերբերյանը և քարոզում՝ «Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» (Ղուկաս. Բ 14) բնաբանով:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվում է հոգեհանգստյան մասնավոր կարգ Մայր տաճարի հանգուցյալ լուսարարապետ ս. Հայկազուն արքեպ. Աբրահամյանի մահվան առաջին տարելիցի առիթով: Հոգեհանգստյան արարողությունից առաջ Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանն իր քարոզի մեջ վեր է հանում լուսահոգի տ. Հայկազուն արքեպիսկոպոսի գործունեությունն ու հիշատակը, որպես տիպար հոգևորականի, անձնդիր և նվիրյալ սպասավորի հայ եկեղեցու:

Ս. պատարագից հետո հանգուցյալ սրբազանի շիրմի վրա կատարվում է հոգեհանգիստ ս. Գայանե վանքի միաբանական գերեզմանատանը՝ մասնակցությամբ Մայր Աթոռի միաբանության, դասախոսական կազմի, հոգևոր ճեմարանի ուսանողության և հանգուցյալ սրբազանի հարազատների և բարեկամների:

Արարողությանը նախագահում է տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը:

* * *

Հունվարի 10-ին, չորեքշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանում սկսվում են երկրորդ կիսամյակի դասավանդությունները:

* * *

Հունվարի 12-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, Երևանում, հայրապետական վիլլայում, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը՝ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ:

* * *

Հունվարի 13-ին, շաբաթ.—Տօն անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հովհաննես քհն. Մարուքյանը:

* * *

Հունվարի 14-ին, կիրակի.—Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մասիս աբդ. Գալստյանը:

Ս. պատարագին ներկա է լինում նաև Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հունվարի 21-ին, կիրակի.—Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

Ս. պատարագին ներկա է լինում նաև Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հունվարի 26-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, Երևանում, հայրապետական վիլլայում, գումարվում է Դերապույն հոգևոր խորհրդի հերթական նիստը՝ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ:

*
* *

Հունվարի 28-ին, կիրակի.—Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը: «Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին» (Մատթ. Ե 9) բնաբանով քարոզում է տ. Մասիս աբդ. Գալստյանը: